Գիտական արդյունքները պետք է հանել միջազգային շուկա

Հունիսի 15-ը՝ Գիտության բարձրաձայնման օր

Չնայած եղած դժվարություններին՝ գիտության առումով Հայաստանն այսօր ունի բարձր մակարդակ, իր տեղն ու դերը համաշխարհային գիտական հանրության շրջանում: Ինչպես երեկ՝ Գիտության բարձրաձայնման օրվա առթիվ լրագրողների հետ հանդիպումին ասաց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանը**, կան բազմաթիվ առաջադրություններ՝ գնահատական միջազգային հանրության կողմից: ԳԱԱ նախագահը ներկայացրեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական ինստիտուտի 5 տարիվ մեկ հրատարակվող զեկույցը՝ «Գիտության վիճակն աշխարհում» վերնագրով:

2010-ին հրատարակված այդ զեկույցում արդյունքները բերված են ըստ տարածաշրջանների: Հայաստանը նեռանված է Կենտրոնական եւ Արեւմտյան Ասիայի երկրների ցանկում: Ըստ զեկույցի՝ Հայաստանն ունի 4 114 հետազոտող գիտնական. այստեղ միայն գիտությունների ակադեմիայի գիտնականները չեն, այլեւ բուհերի եւ այլ կառույցների հետազոտող գիտնականները: 2002թ. համեմատ գիտական հետազոտողների թիվը նվազել է 800-ով: Ի դեմ, Իսրայելի թվերը սխեմայում նեռռված չեն, քանի որ մեծ են, չեն տեղավորվում դռանում ու հանվում են համեմատությունից:

Պետության կողմից գիտությանը տարեկան տրամադրվող գումարները եւս նեռռված են զեկույցում, ըստ այդմ՝ Հայաստանի տարեկան ֆինանսավորումը հավասար է 23 միլիոն դոլարի, Ղազախստանինը՝ 384 միլիոն դոլար, իսկ Իսրայելը յուրաքանչյուր տարի գիտությանը հատկացնում է հինգ միլիարդ դոլար: Այստեղ, ըստ Ռ. Մարտիրոսյանի, կարեւոր է հաշվի առնել, որ համախառն ներքին արդյունքի տոկոսներով Իսրայելն աշխարհում ամենաբարձր տեղն է զբաղեցնում: ԳԱԱ նախագահի խոսքով՝ ուշագրավ են նաեւ արդյունքները, որոնք եւս առանձին բաժնով ներկայացված են զեկույցում:

Գիտական հրատարակումների առումով Հայաստանի

ՍՏՈՒԴԻՈ

արդյունքը եղել է 544 միավոր, Ադրբեջանինը, որ չնայած երկու անգամ շատ գիտական աշխատող ունի ու հինգ անգամ ավելի ֆինանսավորում՝ 292 միավոր: Իսրայելն ունի տասը հազարից ավելի միավոր: *«Այս բոլորը վկայում է, որ խոսակցությունները, թե մեր գիտությունը մեռնում է, մեղմ ասած, անհեղգակ մարդկանց խոսակցություն են կամ չարախոսություն: Այլ հարց է, որ մենք ունենք դժվարություններ, եթե դրանք հաղթահարենք, կլինեն ավելի բարձր ցուցանիշներ»*,– դարձրեց ԳԱԱ նախագահը՝ միաժամանակ նշելով, որ շատ դանդաղ են օգտագործվում մեր գիտական արդյունքները, որոնք պետք է հանել միջազգային շուկա, որպեսզի շուկային տիրապետողները նեռռվեն անենք:

Նշենք, որ Հայաստանում գործող գիտական լրագրողների խմբի համակարգող Ա. Միքայելյանի առաջարկությամբ հունիսի 15-ը հայտարարված է Գիտության բարձրաձայնման օր: Նպատակն է այդ օրը ավիրել լրատվամիջոցների կողմից գիտության խնդիրների լուսաբանմանը:

Թ. Թորամանյանի անվան մրցանակ՝ 20 տարվա ընդմիջումից հետո

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայում երեկ տեղի ունեցավ հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանի անվան մրցանակի հանձնման հանդիսավոր արարողություն: 2011 թ. մարտի 8-ին ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ընդհանուր ժողովում տեղի ունեցած մրցույթում նշված մրցանակի հաղթող են ճանաչվել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Մուրադ Հասարթյանը** եւ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր **Գառնիկ Շախկյանը**:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն ուրախությամբ նշեց, որ վերականգնվում է տարիներ առաջ հիմի դրված բարի ավանդույթը: Անկախության շրջանում որոշակի դժվարությունների հետեւանքով ՀՀ ԳԱԱ մյուս մրցանակների հետ Թորամանյանի անվան մրցանակը եւս դադարել էր գործելուց, սակայն արժանավորներ եղել են: Հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ 20 տարվա ընդմիջումից հետո այն կրկին կյանքի է կոչվում:

«Արժանին արժանավորին մատուցելը արժանապատիվ արարք է»,–հայտնի խոսքը մեջբերեց Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանը՝ շնորհավորելով մրցանակակիրներին:

«Ինձ համար մեծ պատիվ է այս պարգեւը եւ մեդալը ստանալը: Պատվաբեր է, որ ես հիմա այն երախտավորների շարքին եմ, ովքեր մեր դասականներն են»,–ասաց մրցանակակիր Մ. Հասարթյանը՝ նշելով, որ այն ոչ միայն իր անցյալի համար է, այլեւ առաջայի, այն պարտավորեցնում է իրեն ավելի եռանդով աշխատել՝ ի փառս հայ մտավորականի եւ ճարտարապետության:

«Ես չգիտեմ՝ նախախնամությունն ինչպես կամենան իմ հետագա տարիները, սակայն ցանկանում եմ առավել ավիրումով ծառայել իմ գործին»,–ասաց Գ. Շախկյանը՝ հավելելով, որ իր համար կրկնակի պատիվ է մրցանակ ստանալ Մ. Հասարթյանի հետ:

Արմենպրես